ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР. БИОЛОГИЧЕСКИЙ ЖУРНАЛ АРМЕНИИ

XIX, № 11, 1966

ԱՐՏԱՎԱԶԴ ԱՐՇԱԿԻ ԱՎԱԳՅԱՆ

Նոյեմբերի 16-ին հանկարծամահ եղավ սովետական ակադեմիկոս Վ. Ի. Լենինի անվան համամիութենական գյուղատնտեսական ակադեմիայի ակադեմիկոս, ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, պետական մրցանակի դափնեկիր, գյուղատնտեսական գիտությունների դոկտոր Արտավազդ (Արտո) Արշակի Ավագյանը։ Գյուղատնտեսական և կենսաբանական գիտությունները ծանր կորուստ կրեցին։

Ա. Ա. Ավագյանը ծնվել է 1907 թվականին, Նամշադինի շրջանի Նորաշեն գյուղում, հողագործի ընտանիքում։ 1931 թվականին ավարտելով Երևանի գյուղատնտեսական ինստիտուտը, աշխատել է Հայաստանում՝ որպես շրջանային գյուղատնտես։ 1932 թվականին ընդունվել է Լենինգրադի բուսաբուծության համամիութենական ինստիտուտի (ՎԻՐ) ասպիրանտուրան։

Արտո Ավագյանը գյուղատնտեսական և կենսաբանական գիտությունների ասպարեզ մտավ որպես եռանդով լեցուն աշխատող, իր մեծ ուժերը նվիրելով գիտությանը։ Նա ներգրավվեց ժամանակակից կենսաբանության առավել կարևոր պրոբլեմներից մեկի մշակման մեջ, այն պրոբլեմի, որն ընդգրկում է կենդանի և մասնավորապես բուսական օրգանիզմների զարգացման զեկավարման հարցերը։

Ա. Ավագյանի կատարած գիտական հետազոտությունները նվիրված են մի շարք հարցերի, որոնք կարևոր են գյուղատնտեսական բույսերի բնույթի բացահայտման համար։ Նրա բազմաթիվ ուսումնասիրություններից մեկը նվիրված է երկշան ցորենների ու գարիների, որոնք կարող են ցանվել և՛ աշնանը, և՛ գարնանը։ Բնության մեջ գոյություն ունեցող այդ փաստի գիտական պարզաբանումը անհրաժեշտ էր ինչպես գիտության, այնպես էլ գործնականի համար։

Կարևոր են Ա. Ավագյանի կատարած այն ուսումնասիրությունները, որոնք նվիրված են գյուղատնտեսական բույսերի բեղմնավորման կենսաբանությանը։ Իր այդ հետազոտություններով Ա. Ավագյանը լուրջ ներդրում կատարեց բույսերի հիբրիդացման տեսության զարգացման մեջ, դրանով իսկ հարստացնելով այն հզոր, ներկայումս ամենից արդյունավետ եղանակը, որը հնարավորություն է տալիս ստեղծել բուսական օրգանիզմների բազմազանություն, հիմք ստեղծագործական ընտրության և նոր ձևերի ու սորտերի ստացման։

Կենսաբանության մեջ նոր խոսք ասվեց այն փորձերի շնորհիվ, որոնք նա կատարեց պոմիդորի և սոխի վրա։ Վերջինից հմուտ փորձագետն ստացավ

օդային սոխուկներ և երբ ցանք կատարեց այդ սոխուկներով ու սովորական սերմերով, պարզվեց, որ թե՛ մեկից և թե՛ մյուսից ստացված սերնդի կենսունակությունը նույնն է։ Դա կենսաբանության մեջ իրոք նոր խոսք էր, որի համար և հեղինակը դարձավ պետական մրցանակի դափնեկիր։

Արտո Ավագյանի մահվամբ մենք կորցրինք բյուրեղյա ազնվությամբ օժտված մի գործչի, կոմունիստի, մեծ հոգու տեր մարդու, իսկական աշխատասերի, որը իր ողջ կյանքը, կարողությունը, գիտելիքները տվեց պիտությանը։ Նրա հիշատակը վառ կմնա մեր սրտերում։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ